Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

Ltn
541

1999

A3912 - Ա.Ի

# ԵՐԳԱՐԱՆ

## Ի ՀԱՆԴԷՍ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻՈՅՆ ՊԱՐԳԵՒԱԲԱՇԽՈՒԹԵԱՆ

ԱՌԱՔԵԼ ՆՈՒՊԱՐԵԱՆ

ԵՒ

ՕՀ. ՀԱԶԱՐԵԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Ի ԽԱՍԳԻՒՂ Կ. ՊՈԼՍՈՅ. — 1876, Յուլիս 11

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

—

1876

28128-62

5741-60

2ֆ. 543

# ԵՐԳ

## ԱՌ ՎԵՀԱՓԱՌ

## ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏ Ե.

*Ով ազգաց տէր ու թագերու՝ որուն յանուն*
*Արքայք գահուց կ'ըլլան տէր ու ազգաց հայր*
*Տուր օր բարերար մեր վեհ Սուլթանին*
*Որ վեհ Օսմանին բազմի ի գահ հզօր ․*

*Ընկերք յեղեղեմք զանուն*
*Ինքնակալին մեծազօր,*
*Որ մեզ բարի օր շնորհէ ։*
*Քան զայլ արքայս պանծացնեմք,*
*Տանն Օսմանին գահակալ*
*Ինքնակալ Սուլթան Մուրատ խան․*

ԷԼՄԱՍԵԱՆ

ԱՌ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ

# Տ. Տ. ՆԵՐՍԷՍ

## ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

*Ցերկնից սեղան, քո սուրբ անուն*
*Օրհնեալ լիցի, Հովիւդ արթուն,*
*Կեցցես յաւերժ փառօք անհուն.*
*Մատչիմք առ քեզ, աչք ի գորով,*
*Տալ մեր ողջոյն զըւարթ ժպտով.*
*Ի քո գալուստ խայտան սիրտք մեր*
*Թէ համեցար զմեզ պատուել։*

*Խոնարհ սրտից մեր օրհներգներ,*
*Անդին կենացդ ի նուէր,*
*Ընդ միշտ ձօնեն մեր շրթներ.*
*Սանք Նուպարայ խնդրեն, ո Հայր,*
*Քո սէր, խնամք եւ գութ վառ*
*Իրենց վրայ պահես յար։*
*Մեք զորքեր եմք անմահ ուսման,*
*Ցուսոյ, լուսոյ Հայութեան,*
*Հաճէ ըլլալ մեզ պաշտպան։*
*Դու որ արդէն քրտամբ բազում*
*Շահնազարայ իղձք անհուն*
*Պսակած ես եռանդուն։*

Մ. ՍԻՈՍԵԱՆ



ԱՌ

# ՊԱՅԱԶԱՏ ԻՇԽԱՆՍ

## ՆՈՒՊԱՐ, ԱՌԱՔԵԼ ԵՒ ՀԱՅՐ ՇԱՀՆԱԶԱՐ

ԵՐԵԱԿ ՊԱՇՏՊԱՆՔ ՄԵԶ ՍԱՆՈՒՑՍ

*Ո՛վ Բարերար՝ Առաքինիդ վեհազուն,*
*Սեպուհ իշխանդ՝ Նուպար փաշա հայկազուն,*
*Դու վեհ պաշտպան՝ որբ զաւակացս Հայութեան,*
*Կեցջիր՝ փառօք միշտ անսասան ով իշխան.*
*Օ՛ն մանկունք մերազնեայք*
*Դիմեսցուք ընդ առաջ*
*Ի ներբող քաղցր անուան*
*Վեհազնին Նուպարայ։*

*Ո՛ Առաքել՝ դու վեհաշուք ազգասէր,*
*Նախանձելի՝ ի չորս ազգաց լուսասէր,*
*Հոգիդ պայծառ՝ փայլի յերկինս վառ ի վառ,*
*Զանունդ օրհնեմք՝ մեք ի յերկրի անդադար.*
*Օ՛ն մանկունք մերազնեայք*
*Ցնծութեամբ տօնեսցուք*
*Զմեծին Առաքելայ*
*Յիշատակ ցանկալի։*

*Կեցցէ անունդ՝ մեծահոգի Շահնազար,*
*Անզուգական՝ մեծ բարերար մեր եւ հայր,*
*Ի ձօն քեզ տամք՝ չիթս արտասուաց ցօղագին,*
*Ընկալ ո՛ հայր՝ զայս մեր նուէր սրտագին.*

*Ո՛ն մանկունք մերազնեայք*
*Հրճուանօք տօնեցուք*
*Ջնորին զովելի*
*Սուրբ անուն պանծալի։*

Մ. ՄԻՐԱԽՈՐԵԱՆ

---



ԱՌ ՎԵՀԱԶՆ ԻՇԽԱՆ

# ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐԵԱՆ

*Վեհ յաղթոն ի Մասեաց լուսավառ*
*Մինչ Մեմփեան ի բըրգունս երկնածայր,*
*Ուխտք ի սիրտ շընորհիւք Հայկեանս տուն*
*Քեզ, Իշխանդ, հարկանէ օրհնութիւն։*

*Մերս ի նոյն խառնեսցին սուրբ մաղթանք,*
*Որ ըզքաջդ հայրենի եւ զպարծանք*
*Ցերկնաձեմն տանիս բարձր ի կըշիռս*
*Լոյս Հայկազն պատանեացս բաշխեալ ձիրս։*

*Ո՛ն յերկնից կամարէն*
*Քեզ անմահ շուք իջցէն,*
*Պերճ փառաց առատ ուղխք*
*Ցօղեսցին ի գլուխդ*
*Եւ աւուրբք գեղապար*
*Կեցցես դու, Մեծդ Նուպար։*

Հ. Ս. ՊԱՐՈՆԵԱՆ

# ՈՂՋԵՐԳ

ԱՌ

## Տ. ՆԵՐՍԷՍ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

### ՊԱՇՏՊԱՆ ՏԱՃԱՐԻՍ

*Ողջոյն քեզ, հայր, հայր ազգասէրն որբերուն,*
*Երկնանուէր թէ չեմք արժան քոյդ անուան,*
*Ընկալ սիրոյ նորափթիթ սրտերուն*
*Զիղձս եռանդուն, զանդին օրհներգ մանկական.*

*Մեք որդիք եմք հայրենաղուն քաջերի,*
*Մեք սանունք եմք մեր հայրիկին, ՆԵՐՍԻՍԻ,*
*Եկայք, ընկերք, երգել զանուն մեր Մեծին,*
*Եկայք խնկել զսիրտ ի նուէր մեր հայրիկին,*
*Մեր ՆԵՐՍԻՍԻՆ՝*
*Որոյ սուրբ սէրն է վառուած,*
*Սէրն ի սիրտ անմոռաց,*
*Սէրն հայրիկին Հայերու,*
*Հայրիկ Հայկայ որբերու։*

*Ո՛վ, հայրիկ, եկ մերձ տարագիր ի խմբակ՝*
*Որ թեւարաց փութան հեղուլ ի քո գիրկ*
*Զարտօսր աչաց՝ որ խնդութեան են վտակ,*
*Քեզ նուիրեն քո որդիքդ հայրագիրկ.*



*Մեք որդիք եմք յուսոյ լուսոյ Հայութեան,*
*Մեք զէնքեր եմք վառաց մարտինյաղթական,*
*Եկայք, ընկերք, երգել զանուն մեր Մեծին,*
*Եկայք խնկել զսիրտ ի նուէր մեր հայրիկին*
*Մեր ՆԵՐՍԻՍԻՆ՝*
*Որոյ սուրբ սէրն է վառուած*
*Սէրն ի սիրտ անմոռաց,*
*Սէրն հայրիկին Հայերու,*
*Հայրիկ Հայկայ որբերու։*

*Շրթներ շրթանց սիրելաձայն կ'ողջունեն,*
*Զքո գալուստ նուիրական կ'աւետեն*
*Թէ՝ մեզ արթուն հովիւ հօտին բարերար*
*Բերաւ երկինք որբոց բաղձին մխիթար.*

*Արիք, քաջեր վառաց լուսոյ Հայութեան,*
*Մեք հօտերն եմք քաջին հովուին ՆԵՐՍԻՍԻ,*
*Ելէք օն անդր երգել զՈւղերձ մեր Մեծին*
*Ելէք, բառնալ գլուխ սուրբ անուն մինչ յերկին,*
*Մեր ՆԵՐՍԻՍԻՆ՝*
*Որոյ սուրբ սէրն է վառած,*
*Սէրն ի սիրտ անմոռաց,*
*Սէրն հայրիկին Հայերու,*
*Հայրիկ, Հայկայ որբերու.*

Գ. ՅՈՎԻԿԵԱՆ

Ա. Թ.

# Տ. ՏԷՐ ՆԵՐՍԷՍ

## Ս. ՊԱՏՐԻԱՐՔ

Մովսէսդ երկնատուաք Արամեան ազգին,
Որ, խաչ յաջդ 'ւ ի ձախ ցուպ քաջի հովուին,
Շաւիղ լուսահետ փրկութեան յերկիր
Հորդես հէք հօտիդ՝ ընդ դերբուկս ցանցկր,
Որ թեւս լուսափիւռ ի բարձանց գահուդ·
Ջերդ յուսոյ աստղիկ Մասեացն ի ծագ մութ,
Պարզես ըզլուին անձամբք հին փառաց՝
Ցոր թուի աղօտել կայծակ մի կենաց.

Շահնազարայ զաւակունք
Զանունդ օրհնեն մեծապանծ,
Շահնազարայ զաւակունք
Քեզ ձօն ըզսիրտս տան իւրեանց՝
Ցոր Հայրենեաց եւ Ազգի
Հուր բոցավառ բորբոքի·

Մինչ դու, յերկնամուխ զինեալ ի սուրբ զէն,
Հայկեան Մակաբէ, խաւարին ընդդէմ
Մըղես ըզմեծ մարտ փրկութեան Ազգին,
Վառեալք յոգւոյդ խանդ եւ լուսոյ ի սուրն՝



Մըցման ի հանդէս՝ մեծ հետոցդ ըզկնի
Սըլասցուք եւ մեք, նահատակք արի·
Դափնիք ճակատուդ մեզ խրախոյս յորդոր,
Ի՛ ուղեցոյց ի փառս Աջ քո երկնազօր.

Շահնազարայ զաւակունք
Զանունդ օրհնեն մեծապանծ,
Շահնազարայ զաւակունք
Քեզ ձօն ըզսիրտս տան զիւրեանց՝
Ցայնս ըղձոգւոյդ հետ զաւին,
Եւ լինիցին աննըկուն։

Ռ. Ց. Գ.

ԳՐԱԴԱՐԱՆ

# ՁՕՆ

## ԱՌ ՆՈՒՊԱՐ ՓԱՇԱ ՆՈՒՊԱՐԵԱՆ

Կորովիդ պաշտպան Ուսման Տանարիս,
Երկնառաք տամ ի նուէր Դոյզն մաղթանս սրտիս,
Ցանկացար յօժար, Որ լինիս բարերար
Ցիր որդւոց յոլով, 'Ի որբոց եղար Հայր,

օրհնեմք միաբան
զանունդ, վեհ Իշխան,
կեցցես յամերամ
փառօք անթառամ,
կեցցես մշտավառ,
մեր մեծդ վեհ Նուպար:

Եղէք գոչեն մեզ Շիթք քրտանց ճակտիդ,
Սանուցդ տուն այսօր Ազած, տես, դափնիք
Ներբող Քեզ կարդայ, Հէքդ յերկնից յեթեր
Ուղխս ըղձից առատ Նորոգէ ի սէր,

թէ՛ ցօղ 'ցօղ իջցեն
փառօք վերծնցեն
լոյս, յոյս Հայութեան
ի Տուն Նուպարեան
ուր կեցցէ իսպառ
մեր մեծդ վեհ Նուպար:

Իւն անդր ի հանդէս, Արիք Նուպարեան,
Պերճալուր կարդալ Զձայն գ՛ծութեան,
Այս յիշատակիս օր Այս բարենշան
Բախ ի սիրտ կացցէ Բամայն անսասան.

հայ օն ի նուագ,
գլուխ ի պսակ,
հնչեսցի բարբառ,
«կեցցէ բարերար, »
«մեր մեծդ վեհ ՆՈՒՊԱՐ»
«եւ Հայր ՇԱՀՆԱԶԱՐ» :

Գ. ՑՈՎԻԿԵԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0115170